

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 194-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 134 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական տեղեկության պահպանության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պահպանության կարգը սահմանելու մասին» N 134 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անկախ ֆինանսավորման աղբյուրից ստացված երկրաբանական տեղեկության (այսուհետ՝ երկրաբանական տեղեկություն) պահպանության հետ կապված հարաբերությունները:

2. Մշտական պահպանության են ենթակա հետևյալ փաստաթղթերը՝

1) ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների երկրաբանական հաշվետվությունները (համակարգչային ձևավորմամբ կազմված երկու թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները):

2) ընդերքի երկրաբանական ուսումնասիրությանն առնչվող առաջնային փաստաթղթերը՝ երկրաբանական գրառումների օրագիրը, տոպոգրաֆիական և երկրաբանական քարտեզները, վերծանված օդատիեզերական լուսանկարները, մերկացումների ուրվագծերը, երկրաֆիզիկական դաշտային հետազոտությունների տվյալները, ստորերկրյա ջրերի փորձնաֆիլտրացիոն հետազոտությունների տվյալները, հետազոտման և նմուշառման կետերի կոորդինատները:

3) ընդերքօգտագործողների կողմից երկրաբանական հանույթի (քարտեզագրման) նյութերը և դրանց բացատրագրերը՝ երկու թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները:

4) օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված (ստորերկրյա կառույցների շինարարության նպատակով) երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում ստացված տեղեկությունը (հաշվետվության տեսքով) կազմված երկու թղթային օրինակից և դրանց էլեկտրոնային կրիչներից:

3. Երկրաբանական տեղեկության պահպանությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը՝ «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

4. Երկրաբանական տեղեկության նյութերը պետք է պահվեն այդ նպատակի համար հարմարեցված գրապահոցներում:

5. Գրապահոցներում պետք է պահպանվի օդի ջերմաստիճանի և խոնավության հետևյալ ռեժիմը՝

1) օդի թույլատրելի ջերմաստիճանը՝ պլյուս (+16) - (+18) աստիճան՝ ± 2 աստիճան շեղումով:

2) օդի հարաբերական խոնավությունը՝ 60-62 տոկոս՝ ± 5 տոկոս շեղումով:

6. Գրապահոցի յուրաքանչյուր սենյակում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության չափման համար պետք է տեղադրված լինեն ջերմաչափ և խոնավաչափ, որոնց ցուցմունքները յուրաքանչյուր օր պետք է գրի առնվեն մատյանում:

7. Գրապահոցներում պետք է ապահովվի օդափոխությունը: Այնտեղ, որտեղ բացակայում է արհեստական օդափոխությունը և կատարվում է բնական եղանակով օդափոխություն պատուհանների կամ օդանցքների միջոցով, պետք է վերջիններս ծածկվեն մանրանցք ցանցիկներով: Փոշոտված ֆոնդային նյութերը պետք է մաքրել փոշեծծիչով:

8. Երկրաբանական տեղեկություն պարունակող նյութերում բորբոսի հայտնաբերման դեպքում դրանք պետք է չորացնել և մշակել ֆորմալինի երկու տոկոսանոց լուծույթով:

9. Պահպանության ենթակա մաշված և հնացած նյութերը պետք է վերականգնել: Չի թույլատրվում վերականգնման ենթակա նյութերը տրամադրել օգտագործման մինչև դրանց վերականգնումը:

10. Գրապահոցներում նյութերը պահպանվում են դարակների (ստելաժներ) վրա, ստանդարտ թղթապանակների մեջ: Դարակները պետք է գտնվեն պատից 0,7 մետր հեռավորության վրա, իսկ ներքևի դարակները՝ հատակից 0,15 մետր բարձրության վրա: Դարակների միջև եղած հեռավորությունը պետք է 0,7 մետրից ոչ պակաս լինի, իսկ անցումների լայնությունը՝ 1 մետրից:

11. Պահպանման համար հատկացված գրապահոցները պետք է համապատասխանեն հակահրդեհային անվտանգության պահանջներին և ունենան՝

1) վստահելի փականներ ունեցող մետաղյա կամ փայտյա ամուր դռներ.

2) պատուհաններից կողմնակի անձանց հնարավոր ներթափանցումը կանխելու համար պետք է դրանք պատված լինեն մետաղյա պաշտպանիչ ցանցով.

3) մուտքի դռների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պատուհանների ուղեկապում պետք է տեղադրված լինեն պահպանական ազդանշանակրեր:

12. Պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները պահպանվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

13. Երկրաբանական տեղեկություն պարունակող նյութերի գույքագրումը կատարվում է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անգամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ